ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը և Ռուսաստանի Դաշնության դաշնային հակամենաշնորհային ծառայությունը, այսուհետ միասին՝ Կողմեր,

ցանկություն հայտնելով խթանել համագործակցությունը մրցակցային քաղաքականության ոլորտում,

նպատակ ունենալով ստեղծել բարենպաստ պայմաններ Կողմերի միջև համագործակցության հետագա զարգացման համար,

հիմնվելով հավասարության և փոխադարձ շահերի սկզբունքների վրա,

կարևորելով մրցակցային քաղաքականության իրականացման որոշիչ դերը Կողմերի պետությունների տնտեսության արդյունավետ զարգացման խթանման գործում,

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը, իրենց օրենսդրությանը համապատասխան, կիրականացնեն համագործակցություն հետևյալ ուղղություններով.

1) հակամենաշնորհային/մրցակցային օրենսդրության խախտման վերաբերյալ գործերի ուսումնասիրությունների իրականացման ոլորտում փորձի փոխանակում,

2) ոչ գաղտնի տեղեկատվության փոխանակում, այդ թվում՝ Կողմերից մեկի հարցմամբ մրցակցության քաղաքականության ոլորտում օրենսդրության և դրա կիրարկման, ապրանքային շուկաների վիճակի վերաբերյալ,

3) իրավակիրառ փորձի փոխանակում,

4) մեթոդական աջակցության ցուցաբերում, առաջարկությունների և եզրակացությունների նախապատրաստում մրցակցության ոլորտում նորմատիվ իրավական ակտերի և այլ համալիր իրավաբանական ակտերի մշակման ընթացքում,

5) Կողմերի և նրանց պետությունների պետական իշխանության այլ մարմինների միջև փոխգործակցության փորձի փոխանակում:

6) Կողմերի աշխատակիցների որակավորման բարձրացման փորձի և մեթոդների փոխանակում,

7) մրցակցության քարոզչության ոլորտում փորձի փոխանակում,

8) Հակամենաշնորհային/մրցակցային օրենսդրության և մրցակցության քաղաքականության ոլորտում միջազգային համագործակցության բազմակողմ հարցերի վերաբերյալ կարծիքների փոխանակում:

2. Կողմերը կզարգացնեն համագործակցությունը տարբեր մակարդակներում երկկողմ հանդիպումների, համաժողովների և որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների անցկացման միջոցով:

3. Կողմերի միջև սույն հուշագրի մեկնաբանման և կատարման հետ կապված վիճահարույց հարցերը լուծվում են Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով:

4. Սույն հուշագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր և չի առաջացնում միջազգային իրավունքով կարգավորվող իրավունքներ և պարտավորություններ:

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է Կողմերից մեկի՝ Հուշագրի գործողությունը դադարեցնելու մտադրության վերաբերյալ մյուս Կողմից գրավոր ծանուցում ստանալու օրվանից հետո մինչև վեց ամիսը լրանալը:

Ստորագրված է 2021 թվականի մարտի 19 -ին ք. Մոսկվայում երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	**Ռուսաստանի Դաշնություն դաշնային հակամենաշնորհային ծառայություն**
Նախագահ	**Ղեկավար**
Գեղամ Գևորգյան	**Մաքսիմ Ցասկոլսկի**